Պատմության ուսուցիչ Կ.Պողոսյանի 2022-2023 ուստարվա կատարած աշխատանքների հաշվետվություն

Պատմությունը ժողովուրդների հավաքական հիշողությունն է,իսկ Հայոց պատմությունը՝ հայ ժողովրդի կենսագրությունը:Հայոց պատմության և Համաշխարհային պատմության դասընթացի բովանդակության ակտիվացումը կախված է ուսուցչից , նրա պատրաստվածության աստիճանից, ուսուցման կազմակերպման ձևերից ու մեթոդներից , ինչպես նաև ուսուցման գործընթացում ուսուցչի ու սովորողների ակտիվ փոխհարաբերություններից:Ուստի, որպես պատմության ուսուցիչ, աշխատում եմ լինել բարեխիղճ , հետևողական: Օգոստոսին չափորոշչի պահանջներին համապատասխան կազմել եմ թեմատիկ պլանը, որով առաջնորդվել եմ ուստարվա ընթացքում :Ուստարվա ավարտին ծրագիրը հասցված է:Կանոնավոր կերպով կատարել եմ էլեկտրոնային մատյանի գրանցումները՝ հետևելով բոլոր ցուցումներին:

Հաճախ անց եմ կացրել տեսադասեր,կինոդիտումներ:Հատուկ ուշադրություն եմ դարձրել ԿԱՊԿՈՒ աշակերտներին:

6-րդ և 8-րդ դասարաններում անց եմ կացրել բաց դասեր՝ «Տիգրան 2-րդ Մեծ» և «Հայոց մեծ եղեռն» թեմաներով: 5-րդ« ա» դասարանում անց եմ կացրել« Սուրբ Հարության տոն» միջոցառումը:

Մասնակցել եմ ՀՊՉ –ի փոփոխություններին նվիրված դասընթացներին, ԿՏԱԿ-ի կողմից կազմակերպված առցանց դասընթացի՝ ստացել վկայական, « Քաղաքացիական կրթության » առացանց դասընթացին:

9-րդ դասարանցիներին նախապատրաստել եմ պետական ավարտական քննության:

Հաջորդ ուստարում պլանավորում եմ աշխատել նույն ոճով՝ սերմանելով հայրենասիրություն, հարգանք հայրենիքի նկատմամբ:Պլանավորում եմ բաց դաս, առարկայական մրցույթ , միջոցառում: